ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հուլիսի 7-ին կնքված N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9** գնման պայմանագրում 2024 թվականի մայիսի 17-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Պայմանագրի N 1 հավելվածում տեղ գտած վրիպակի շտկում:
Փոփոխության նկարագրություն	N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9** գնման պայմանագրի Ծավալաթերթ-նախահաշվում տեղ գտած վրիպակի շտկում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6
07.07.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 գնման պայմանագրի

ք. Երևան 17.05.2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վարարակն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս տնօրեն Ա. Բուդաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 07.07.2022թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշեցին շտկել Պայմանագրի N 1 հավելվածում տեղ գտած վրիպակը՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշվի վերջին տողի վերջին սյունյակի <<179164780.4>> թիվը փոխարինել <<1 791 647 780.4>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Վարարակն>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Արցախյան խճ. 4
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2475703024940000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09200036
Հ/Հ 900011040335	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝
պարտականությունները կատարող՝	
Կ. Անտոնյան	Ա. Բուդաղյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.